Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ ● Անվանում, հասցե ● Տնօրեն ● Էլ.հասցե ● Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր ● Հետազոտության թեմա	Հուշարձանների դերը սովորողների մոտ որպես ճանաչողական գիտելիքների զարգացման աղբյուր
Ուսուցչի տվյալներ ● Անուն, ազգանուն, հայրանուն ● Մասնագիտություն ● Հեռախոս ● Էլ. հասցե ● Դասավանդվող առարկաներ ● Դասարաններ	● Նիգոյան Արմենուհի Սիմոնի ● Ինֆորմատիկայի ժողովրդական գործիքների նվագախմբի ղեկավար ● 077428478 ● armineharm1979@gmail.com ● Երաժշտություն,ԱԵՊ ● 1-ից 7-րդ դասարաններ

Ուսումնական հաստատության տվյալներ	Երևանի թիվ179 հիմնական դպրոց (ՊՈԱԿ)
• Անվանումը, հասցե • Հեռախոս • էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Հայաստան, Երևան Օգանովի փող., 72 շենք (Մալաթիա-Սեբաստիա վարչ. շրջան) +374-10-729110

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Բովանդակություն

Հետազոտական աշխատան 1

Տիտղոսաթերթ.....1

Բովանդակություն.....2

Ներածություն.....3

Օգտագործված մեթոդներ 5

Հիմնական բովանդակություն 7

Հետազոտական ընթացք 9

Եզրակացություններ,առաջարկներ 20

Այլ տեղեկություններ 21

Օգտագործվաց ցանկ.....23

Հավելվածներ.....24

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Սովորողների հոգևոր զարգացման և որպես պետական մտածողություն ունեցող քաղաքացու ձևավորման գործում մեծ դեր ունի ազգային և այլ մշակույթների ծանոթ լինելը:Դա կօգնի նրանց զարգացնել մշակութային կարողունակություններ՝ արժևորել հոգևոր և նյութական ժառանգությունը, զարգացնել սեփական մշակութային և գեղագիտական պատկերացումները, ձևավորել մշակութային գրագիտություն և հաշակ: Մշակույթը,լինելով մարդու պատմական զարգացման որոշակի մակարդակ, արտահայտում է մարդկանց գործունեության և կյանքի կազմակերպման ձևեր ու տիպեր: Մշակութային ժառանգություն մաս կազմող հուշարձանը երկրի, ժողովրդի ստեղծագործությունն է:Ըստ տիպաբանական առանձնահատկությունների, հուշարձանները բաժանվում են չորս հիմնական խմբի. հնագիտական, պատմության, հարտարապետության և մոնումենտալ արվեստային: Հուշարձաններ են համարվում նաև պատմահանաչողական և պատմագեղագիտական նշանակություն ունեցող գրչության նմուշները: Նեղ առումով հուշարձանը մարդկանց հիշատակը և իրադարձությունները հավերժացնող արվեստի ստեղծագործություն է (անկախ տիպից, հուշարձանի անհրաժեշտ հատկանիշը շրջապատող տարածությունը գեղարվեստորեն կազմակերպելն է:

	«Երաժշտություն» առարկան մեծ դեր ունի մեր մշակութային արժեքների՝այդ թվում նաև նյութական ժառանգության իմացության գործում:Դրան նպաստում է նաև էքսկուրսիաների կազմակերպումը դեպի պատմամշակութային կենտրոններ և վայրեր: Սովորողները տեսնում են մոնումենտալ արձաններ,ծանոթանում դրանց ստեղծման պատմությանը և գնահատում դրանց պահպանման ու խնամքի կարևորությունը: Երևան քաղաքը շատ հարուստ է այդպիսի մոնումենտալ հուշարձաններով և դա հեշտացնում է մեր առջև դրված խնդիրը՝ ինչպե՞ս է հուշարձանների առկայությունը նպաստում սովորողների ճանաչողական գիտելիքների զարգացմանը:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակության է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Սովորել սովորելու կարողունակություն, ինքնաճանաչման սոցիալական կարողունականություն:
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Թիվ 179 հիմնական դպրոցի 8-րդ բ դասարան 29 սովորող 16 աղջիկ 13 տղա Ներկայացրեցին 16 աղջիկ

Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանակական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Օգտագործել ենք խճանկար մեթոդը, հետազոտական մեթոդներից, գործիքներից՝ քանական հետազոտություն, հարցաթերթիկի միջոցով:Որակական հետազոտություն՝ հարցազրույցի միջոցով:
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	01.09.2023-25.09.2023թթ

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: <u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>	Հայկական մշակույթի ակունքները գալիս են դեռևս հայկական ցեղային միությունների ու պետական կազմավորումների ժամանակներից: Դրանք մեզ ծանոթ են ոչ միայն պահպանված առասպելներից և կրոնական հավատալիքներից, այլև պեղումների նյութերից: Մշակույթի հյուղերն են լեզուն, գրականությունը, ճարտարապետությունը, քանդակագործությունը, նկարչությունը, երաժշտարվեստն ու պարարվեստը, թատրոնն ու կինոն և այլն: Պատմական հանգամանքների բերումով հայկական մշակույթը ձևավորվել ու զարգացել է ոչ միայն բուն Հայաստանում, այլև Սփյուռքում: Հայաստանում մինչև օրս մնացել են մշակութային ոլորտներ,գործիչներ ու օջախներ,որոնք պահպանում ու տարածում են,ինչպես տեղի, այնպես էլ օտարազգի մշակույթի ավանդույթները, թե մեր, այնպես էլ արտերկրում: Ապրիլի 18-ը Հուշարձանների պահպանության միջազգային օրն է, որը 1983 թվականից նշվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաջարկությամբ: Նպատակն է գործունեության տարբեր ձևերով հանրահռչակել հուշարձանների պահպանության կարևորությունը և նպաստել այդ հսկայական ժառանգության պահպանության իրականացմանը: Հայաստանում այս օրը նշվում է 1993 թվականից: XIX դարի վերջին - XX դարի սկզբին ի հայտ են եկել հայ ականավոր գրողներին և հասարակական

գործիչներին նվիրված հուշարձաններ (Ռափայել Պատկանյանի, 1901, և Միքայել Նալբանդյանի, 1902, հուշարձանները Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանքի բակում, Խաչատուր Աբովյանի հուշարձանը Երևանում, 1913, բացվել է 1933-ին, երեքն էլ՝ բրոնզե արձաններ են, հեղինակն՝էլ Ա. Տեր-Մարուքյան):

Հայաստանում 25 հազարից ավելի պատմամշակութային հուշարձաններ կան, որոնց թիվն ավելանում է տարեցտարի՝ շնորհիվ ամենամյա տարբեր հնագիտական պեղումների և ուսումնասիրությունների:

1.https://asue.am/amberd/publications/three/colors/of/armenian/monuments

2, https://komitasmuseum.am/about-komitas/%d5%a3%d5%b8%d6%80%d5%ae%d5%b8%d6%82%d5%b6%d5%a5%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%b8%d5%ac%d5%b8%d6%80%d5%bf%d5%b6%d5%a5%d6%80/

Հուշարձանները մշակութային այն կոթողներն են, որոնք նոր շունչ ու կենդանություն են հաղորդում քաղաքին:

Արա Սարգսյան, Երվանդ Քոչար, Արա Հարությունյան, Ղուկաս Զուբարյան, Ֆերնանդո Բոտերո. ահա աշխարհահռչակ քանդակագործների ոչ լրիվ անվանացանկը, ովքեր քանդակագործության անխոս, սակայն միանգամայն արտահայտիչ լեզվով ստեղծել են

	Երևանը գեղեցկացնող անմահ գործեր: Գործեր, որոնք հազարավոր անտեսանելի թելերով կապված են պատմությանը, ժողովրդի հոգուն, ավանդույթներին:
Հետազոտության ընթացքը	Սովորողները բաժանվել են հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի փորձագետ: Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման, հավաքում են տեղեկատվություններ: Դասի ընթացքում օգտագործեցի «խճանկար» մեթոդը: Սովորողները բաժանվեց 3 ուսումնական խմբերի, որոնք ընտրեցին իրենց համապատասխան թեման: Նրանց բացատրվեց աշխատանքի նպատակը և գնահատման չափանիշը:Դասի նյութը բաժանվեց 3 մասի: 1. Հովհաննես Թումանյանի,որպես բանաստեղծ,հասարակական գործիչ: 2. Կոմիտասի,որպես բանահավաք,կոմպոզիտոր,կատարող և մանկավարժ: 3. Ավետիք Իսահակյանի,որպես գրող,բանաստեղծ,հասարակական գործիչ: Երեք խմբերից յուրաքանչյուրը կազմեցին փորձագիտական խմբեր: Նյութերը ներկայացրեցին էլեկտրոնային դասասենյակում:Երեք խմբերն էլ ունին իրենց պաստառները: 1 ա)Թումանյան բանաստեղծ:

«... Թումանյանի պոեզիան Հայաստանն ինքն է՝ հնադարյան և նոր, հարություն առած և բանաստեղծությամբ արտահայտված՝ մեծ վարպետի ձեռքով»,-այսպես է բնութագրել Հովհաննես Թումանյանին ռուս պոետ, արձակագիր, դրամատուրգ, գրականագետ Վալերի Բրյուսովը:

Ամենայն հայոց մեծ բանաստեղծ Թումանյանի բանաստեղծությունները միշտ էլ ամենասիրելի և ամենահարազատն են:Նրա բանաստեղծությունների մեջ զգացվում է իր հոգին, իր տխրությունը, իր ուրախությունը , բարկությունը և այլ էմոցիաները: Նրա բանաստեղծությունները ֆեզ քաշում և տանում են մի ուրիշ աշխարհ ՝ Թումանյանի աշխարհ ,որտեղ ամենինչ ուրիշ է: Յուրաքանչյուր բանաստեղծություն իր պատմությունով , էմոցիաներով և հերոսներով է գրված:Նրանք իրարից տարբերվում են, կարծես տարբեր մարդիկ են գրել:Նրա բանաստեղծությունները որիշ են, կարծես ամեն բանաստեղծություն գրելիս նա իր սրտի խորքում գտնվող էմոցիաները հավաքում էր թանաքի մեջ, և գրում էր նրանով թղթի վրա...

բ) 20-րդ դարի սկզբին Թումանյանը հայտնի է դառնում նաև որպես հասարակական գործիչ: 1905-1906 թվականներին հաշտարարի դեր է կատարել ցարական կառավարության հրահրած հայ-թաթարական կռիվների ժամանակ, որի պատճառով 2 անգամ ձերբակալվել է: 1918 թվականին հայ-վրացական պատերազմի ժամանակ խստագույնս քննադատել է 2 հավատակից ժողովուրդների թշնամությունը հրահրողներին:

Թումանյանին մշտապես մտահոգել և հուզել է հայ ժողովրդի ճակատագիրը, Հայոց ցեղասպանության հետևանքով Արևմտյան Հայաստանից տեղահանված հայության վիճակը: 1916 թվականին 2 անգամ եղել է ազատագրված վայրերում. հասել է մինչև Վան, օգնել հայ գաղթականներին, հատկապես Էջմիածնում հավաքված որբ երեխաներին: 1914 թվականին Թումանյանը միանում է Պատերազմից վնասվածներին օգնող կոմիտե-ին, որ հետագայում օգնեց մազապուրծ եղած հայ գաղթականներին Էջմիածնում հաստատվել:

1900-ական թվականներին Թումանյանի երկերի նոր բովանդակությունը որոշակիորեն պայմանավորված էր նոր գրական-ընկերական խմբավորմամբ, որը կրում էր «Վերնատուն» անվանումը: «Վերնատուն» գրական խմբակը մեծ դեր ունեցավ ինչպես հայ գրականության, այնպես էլ 20-րդ դարի սկզբի հայ մշակույթի պատմության մեջ: «Վերնատան» մասին հուշեր են գրել Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Լևոն Շանթը, Լեոն և այլք:

Թումանյանի ստեղծագործությունները ժողովրդականացել են, լույս են տեսել տարբեր նկարիչների պատկերազարդումներով, վերածվել երգերի: Նրա գործերի հիման վրա Արմեն Տիգրանյանը գրել է «Անուշ» (ըստ համանուն պոեմի), Ալեքսանդր Սպենդիարյանը՝ «Ալմաստ» (ըստ «Թմկաբերդի առումը» պոեմի) օպերաները, նկարահանվել են բազմաթիվ մուլտիպլիկացիոն («Զախորդ Փանոսը», «Սուտլիկ որսկանը» և այլն) ու գեղարվեստական («Անուշ»,

«Գիքորը», «Տերն ու ծառան», «Զախ-Զախ թագավորը») ֆիլմեր:

«...Հովհաննես Թումանյանի գրեթե բոլոր գրվածքները կարելի է այս կամ այն ձևով երաժշտության վերածել, այնքան տրամադրող ու հնչուն են դրանք; Մեր բանաստեղծներից և ո՛չ մեկը այնքան չի օգտագործվել կոմպոզիտորների կողմից, որքան Հովհաննես Թումանյանը»,- գրել է կոմպոզիտորԱրմեն Տիգրանյանը:

Հովհաննես Թումանյանի հուշարձանը գտնվում է Երևանի Ազատության հրապարակում, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի շենքի առջև, տեղադրվել է 1957 թվականին,ի պատիվ «Ալմաստ» օպերայի,որպես գրական տեքստի հեղինակ: Ընդգրկված է Երևանի Կենտրոն վարչական շրջանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում:

Հեղինակներ են՝

ճարտարապետ՝ Գրիգոր Աղաբաբյան և

քանդակագործ՝ Արա Սարգսյան:

Հուշարձանը կառուցված է բրոնզից, Բջնիի բաց վարդագույն գրանիտից, բարձրությունը պատվանդանով 8,5 մետր է:

2.ա)Կոմիտաս բանահավաք:

«Հայ ժողովուրդը կոմիտասյան երգին մեջ գտավ, ճանաչեց իր հոգին, իր հոգեկան ինքնությունը: Կոմիտաս վարդապետը սկիզբ է, որ վախճան չունի: Նա պիտի

ապրի հայ ժողովրդով, հայ ժողովուրդը պիտի ապրի նրանով,ինչպես այսօր,այնպես էլ հավիտյան», –ասել է Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը:

Կոմիտաս վարդապետն ավանդական երաժշտության հավաքումը, դասակարգումը և ուսումնասիրությունը գիտական հիմքերի վրա դրեց: Նա աշխարհում առաջին երաժշտական ֆոլկլորագետներից է: Ողջ գիտակցական կյանքի ընթացքում նա պարբերաբար մեկնել է տարբեր բնակավայրեր՝ հավաքելով ավանդական երաժշտության նմուշներ: Նախապատվությունը տալիս էր խուլ գյուղերում գրառված երգերին, քանի որ այնտեղ օտար ազդեցությունները քիչ են, և երգը պահպանվում է իր անաղարտ վիճակում: Այս աշխատանքը շատ դժվար էր, քանի որ գյուղացիները հրաժարվում էին երգել երգի իրական միջավայրից դուրս, պարզապես գրանցելու համար: Ըստ Կոմիտասի. «Շատ դժվարությունով կամ ամենեին չեն երգում, նոյնիսկ ծաղր են անում, եթէ մի ոչ գյուղացի խնդրէ, որ, օրինակ, մի շինականի երգ ասեն, երբ գործի չեն, այն էլ՝ տանը: Ժողովուրդն արուեստական երգեցողութիւն ասած բանը չը գիտէ: Իւրաքանչիւր երգ իր տեղում, իր ժամանակին է ստեղծում կամ սովորում: Ոչ մի գիւղացի, տանը նստած, կալի երգ չի ասի. որովհետեւ կալերգն ստեղծելու եւ ասելու տեղն է կալը» («Հայ գեղջուկ երաժշտութիւն», Ուսումնասիրութիւններ և յօդուածներ, Գիրք Ա, էջ 377):

Հաղթահարելով դժվարությունները՝ Կոմիտասին հաջողվել է գրառել և այդպիսով մոռացումից փրկել հայ ավանդական երաժշտության հազարավոր նմուշներ: Այդ թվում են հայ հոգևոր ու ժողովրդական երաժշտության

այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են «Մոկաց Միրզա» վիպերգը, «Սասնա ծռեր» էպոսի երգվող հատվածները, «Կռունկը» և այլ պանդխտության երգեր, «Լռովա գութաներգը» և աշխատանքային այլ երգեր, «Տիրամայրն» խաչելության ողբը, Գրիգոր Նարեկացու տաղերը և այլն:

բ)Կոմիտաս կոմպոզիտոր:

Կոմիտասը հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրն է: Հիմնվելով արևմտաեվրոպական երաժշտության զարգացման փորձի ու հայ կոմպոզիտորական դպրոցի ձեռքբերումների վրա և հետազոտելով հայ ավանդական երաժշտության առանձնահատկությունները՝ նա ստեղծեց կոմպոզիտորական ուրույն ոճ, որը համաշխարհային երաժշտության պատմության մասշտաբով ինքնատիպ է և չկրկնվող:

Կոմիտասի ստեղծագործական ժառանգությունն ընդգրկում է հայկական ժողովրդական ու հոգևոր երգերի մշակումներ և ժողովրդական սկզբնաղբյուրից անկախ (հեղինակային) գործեր: Մշակումները նույնպես ընդունված է համարել ստեղծագործություններ՝ նկատի ունենալով կոմպոզիտորական ինքնատիպ մոտեցումը: Կոմիտասը գրել է հիմնականում հետևյալ ժանրերում.

ա) Մեներգեր դաշնամուրի նվագակցությամբ:

բ) Խմբերգեր:

գ) Դաշնամուրային գործեր:

դ) Օպերային նախագծեր:

ե) Անսամբլային և նվագախմբային գործեր:

գ)Կոմիտաս կատարող

Կոմիտասը եղել է երգիչ և խմբավար: Նրա թե՛ մենակատարային, թե՛ որպես երգչախմբի ղեկավար կատարումները լայն արձագանք են ունեցել ունկնդիրների շրջանում: Բազմաթիվ վկայություններ կան, որ նա հրաշալի ձայն է ունեցել և անգամ իր երգեցողությամբ ողջ լսարանին «ստիպել» արտասվել: Պահպանվել են 1912 թ.-ին Փարիզում իրականացված՝ Կոմիտասի երգեցողության ձայնագրություններ:

դ)Կոմիտաս մանկավարժ:

Կոմիտասը դասավանդել է Գևորգյան ճեմարանում, ապա նաև մասնավոր դասեր է վարել Կոստանդնուպոլսում: Կոմիտասը ցանկություն ուներ Կոստանդնուպոլսում երաժշտանոց հիմնել: Ցավոք, նա նպատակը չհասցրեց իրականացնել, սակայն նա հասցրեց կրթել երիտասարդ, շնորհալի սերունդ, որոնցից ոմանք հայ երաժշտության բնագավառում կարևոր դեր խաղացին: Կոմիտասի աշակերտներից Բարսեղ Կանաչյանը դարձավ կոմպոզիտոր, Վարդան Սարգսյանը եղավ նրա ստեղծագործությունների տարածողը, Միհրան Թումանյանը շարունակեց զբաղվել բանահավաքչությամբ:

Կոմիտասի հուշարձան, գտնվում է Երևանի կենտրոնում՝ Կոմիտասի անվան կոնսերվատորիայի առջևի պուրակում, տեղադրվել է 1988 թվականին: Ընդգրկված է Երևանի Կենտրոն վարչական շրջանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում:

Հեղինակներն են՝ քանդակագործ՝ Արա Հարությունյանը,իսկ

Ճարտարապետն է՝ Ֆենիքս Դարբինյանը:

Հուշարձանը կառուցված է բրոնզից ու գրանիտից, բարձրությունը 3 մետր է:

ա)Ավետիք Իսահակյան գրող

Քո երգերն իրենց ինքնուրույն ու պատկերավոր գեղեցկությամբ անզուգական տեղ են բռնում: Վ.Տերյան

Ավետիք Իսահակյանը գործունեություն է ծավալել ամենատարբեր ոլորտներում, սկսած թարգմանություններից մինչև՝ արձակներ, գրական, հասարակական և քաղաքական գործունեություն: Այսպիսով նրա անձը հետաքրքիր է ոչ միայն որպես գրող, այլ՝, որպես հասարակական գործիչ:

բ) Գրական գործունեությանը զուգնթաց վաղ երիտասարդական տարիներից զբաղվել է նաև քաղաքական գործունեությամբ: 1895-ին վերադառնալով Լայպցիգից՝ ընդգրկվել է նորաստեղծ ՀՀԴ կուսակցության Ալեքսանդրապոլի կոմիտեի մեջ, մասնակցել Ալեքսանդրապոլից Արևմտյան Հայաստան ուղարկվող զինյալ խմբերի ստեղծմանը, զենք և դրամական միջոցների հայթհայթման գործին: 1896-ին ձերբակալվել է և մեկ տարի արգելափակվել Երևանի բերդում: Բանտից դուրս գալուց հետո տպագրել է իր բանաստեղծությունների առաջին ժողովածուն, որը կոչվում է «Երգեր և վերքեր» (1897), սակայն շուտով կրկին ձերբակալվել է և, որպես ցարական միապետության դեմ պայքարող «Ընդհատակյա

	հեղափոխական կազմակերպությունների» անդամ, աքսորվել Օդեսա: Արդյունքները ամփոփել ենք ըստ անհատական և խմբային ցուցանիշների,հարցաթերթիկի միջոցով:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Հուշ-արձան: Բառն ինքնին հուշում է, թե ինչի համար են ստեղծվում: Նույնիսկ մեծ իրադարձություններին ու հայտնի մարդկանց սպառնում է մոռացությունը: Դրա համար են հուշարձանները:Ի վերջո հուշարձանը մարդկանց հիշատակը և իրադարձությունները հավերժացնող արվեստի ստեղծագործություն է,անկախ տիպից, հուշարձանի անհրաժեշտ հատկանիշը շրջապատող տարածությունը գեղարվեստորեն կազմակերպելն: Տարբեր ազգեր մարդկությանը նվիրել են բառեր, որոնք չեն թարգմանվում քանի որ հասկանալի են ինքնին և նկարագրում են տվյալ ազգի կենսագրությունը: Հուշարձանների նաև հուշում են հրապարակների, պողոտաների,փողոցների, դպրոցների անունները:

Կատարած հետազոտություն:



Հետազոտության արդյունքում ստացած տվյալների հիման վրա պարզ դարձավ,որ հուշարձանների առկայությունը մեծապես նպաստում է միջին դպրոցի սոցորդների ճանաչողական գիտելիքների զարգացմանը:

Ավետիք Իսահակյանը,Հովհաննես Թումանյանը և Կոմիտասը մեր պատմության էջերում մնացել են ոչ միայն տաղանդաշատ գրողներ, այլև որպես ազգանվեր ու համարձակ գործիչներ ու շատ այլ գրողների «կնքահայրեր»:

Լինելով «մեծություն» արժանանում ես հուշարձանի:

Այլ տեղեկատվություն	Презентация без названия.pptx

Օգտագործված գրականության ցանկ

1.https://komitasmuseum.am/about-komitas/%d5%a3%d5%b8%d6%80%d5%ae%d5%b8%d6%82%d5%b6%d5%a5%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%b8%d5%ac%d5%b8%d6%80%d5%bf%d5%b6%d5%a5%d6%80/

2.https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%BE%D5%A5%D5%BF%D5%AB%D6%84_%D4%BB%D5%BD%D5%A1%D5%B0%D5%A1%D5%AF%D5%B5%D5%A1%D5%B6

3.https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%B8%D5%BE%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D5%BD_%D4%B9%D5%B8%D6%82%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ













1869-1923

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
8
դասարան

Շնորհակալություն ...